Հնազանդության առաջին որինակը Ավագը տվավ, նախ դեսպան ուղարկելով յուր տան վերակացու Գրիգոր Խաչենեցուն և ապա անձամբ ներկայանալով Սևանա ափերին վրան խփած Զարմաղանին. վերջինս սիրով ընդունեց նորան և պատվիրեց Թաթար զորքերին այլևս չկռվել Ավագի իշխանության յենթարկված բերդերի և քաղաքների հետ։ Ավագի որինակին հետևեցին և մյուս իշխանները՝ Վահրամ Զաքարյանը, Շահնշահ, Խաչենի իշխան Հասան—Ջալալ, Ելիկում Որբելյան «և այլք բազումք», հաստատվելով իրենց իշխանությունների մեջ։ Այս դրությունը նվիրագործվեցավ և վերջնական կերպարանք ստացավ Ավագի այցելությամբ խաղանին, վոր սիրով ընդունեց նրան, «և գրէր առ զօրավարն իւր (Զարմաղան) տալ ի ձեռն նորա զիւր աշխարհն և նովաւ նուաճել զամենայն ապստամբսն, որ եղև իսկ»։ Հայ իշխանները պարտավոր եյին հարկ տալ և մասնակցել իրենց զորքերով թաթարների արշավանքներին. Զարմաղանի հաջորդ Բաչուի ժամանակ նոքա մասնակից են արդեն 1242 թ. Կարնո, 1243 թվին Կեսարիայի, Սեբաստիայի և Փոքր-Ասիայի մյուս քաղաքների նվաճման*։ Արշավանքների մասին տեղեկություն է տալիս յուր հիշատակարանի մեջ և «Գրիգոր որդի Հասանայ եւ Դոփին» իբրև մասնակից դեպքերին**։ Վորքան և ծանր եր թաթարների տիրապետությունը իրենց հարկապահանջությամբ, կեղեքումներով և կամայական կառավարությամբ, բայց և այնպես քառասնական թվականներից արդեն մի modus vivendi եր կազմված նրանց և հայ իշխանների մեջ և հետզհետե կյանքը տանելի դարձել։

Քաղաքական այսպիսի վիճակի մեջ եր յերկիրը, յերբ Պռոշ իշխանության գլուխն անցավ. պատմական վոր և է ցուցում չունինք, թե Պռոշ մասնակից յեղավ Ջալալեդդինի դեմ մղված պատերազմին Գառնիի մոտ. բայց միանգամայն հավանական ենք համարում այդ. յեթե Լիպարիտ, ավելի հեռու ընկած Որբելյան իշխանության պետը, մասնակից եր այդ մարտին, վորչափ ևս Պռոշ, վորի սահմանների մոտ հանդիպեցան յերկու հակառակորդները. գուցե և Իվանեի տաս մարդկանցից մեկը, վորոնց հետ ազատվեցավ Քեղվա ամրությունների մեջ, Պռոշն եր. վորովհետև այդ բերդը, ինչպես տեսանք, գտնվում եր Գրիգոր Խաղբակյանի, իսկ այդ ժամանակ նորա վորդու, իշխանության սահմանում։ Համենայն դեպս Խորազմներից վրեժ լուծելու պատիվն ու բաղդը վիճակված եր Պռոշին. «մտանէ Պռոշ ի Դուին և կոտորէ զԽորազմն և զՏաճիկն», նշանակում է Այրիվանեցին յուր ժամանակագրության մեջ, Ջալալեդդինի տարած այս հաղթությունից անմիջապես հետո, միակ աղբյուրը այս իրողության համար։ Ժամանակի վերաբերությամբ կարող ենք դնել 1226—1228թ. վորովհետև նույն Այրիվանեցին Խլաթի գրավումը դնում է այս



Գեղարդի պահարանի արձանագր. **Պատկեր 28.** Հավել. Ա. 15.

դեպքից հետո, իսկ ուրիշ աղբյուրից գիտենք, վոր այդ կատարվել է 1228/9 թվին*.

Ստ. Կանայան. Թիֆլիզ. 1893. յեր. 56. Նույնը Մաղաքիա արեղայի. Պատմ. Աղգին Նետողաց. Սպ. 1870. Հավել. 57։ Մաղաքիայի բուն պատմության մեջ յեր. 4։

* Գանձակեցի 242—244. 249. 265—269. Վարդան 193. Օրբելեան. 404։

** Մեր հիշատակարանների ժողովածուն. Որթաքիլիսայի ավետարանի պահպանակը։

* Զեռ. Էջմ. № 589։ Նոր 8ուց. Վոմն Վարդան վարդապետի՝ Տոնականի ստացողի՝ հիշատակարանում նշանակված է Խլաթի պաշարման և առման ճիշդ թվականը. «Ցայսմ ամի («ի ՈՀԸ«=1128/9.) Խորազմ շահն բազում գաւառս աւարեաց և անմարդ արար և անթիւ զաւրաւք պաշարեաց զԽլաթ և ունի ի մեծ նեղութեա». քիչ հետո նույն ձեռքով, բայց տարբեր թանաքով ավելացրած է «որ և առ ի նոյն ամի»։ Վարդան վարդապետը Տուրուբերանի Խարձի անապատից եր, ուր հիշվում են նաև Ղազար վարդապետ, վոր գրիչ Հովհաննէս քահանայի վարդապետն է։ Հիշվում է և հայր Կարա-